

Գալով Հայկական եկեղեցւոյ ներկայ դրութեան, պէտքէ տաել, որ արդարեւ այժմ ներկայ գարուս լուսաւորութեան շնորհիւ վայելումէ ոս աւելի խաղաղ օրեր, ունի գործելու բաւական միջոցներ, բայց եւ այնպէս սորա վէրքերն այնքան խոր են եւ պէտքերը այնքան բազմադիմի, որոց բժշկելու եւ բաւականութիւն տալու համար անհրաժեշտ են աւելի նիւթական եւ բարոյական ազգու միջոցներ՝ քան որչափ այժմ ունի ի ձեռլին Տունը առանց շինող ձեռքերի չի կանգնիլ. Հայ ազգի բարոյական վերքերն ու աւերակները քն բժշկուիլ ու վերանորոգվիլ առանց հմուտ բժիշկ ու ճարտարապետ ձեռքերի. դոցա համար մարդիկ են հարկաւոր. ահա այն միակ զրազմունքը, որը Հայկական եկեղեցւոյ ներկայ մեծագործ Հայրապետի անխոնջ ջանից, անդուլ գործունեութեան եւ անքուն հոգածութեան առարկայ է գարձած:

ՍՈՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ.

Ա Գ Ա Հ Ի Ը Ն Ծ Ա Ն.

Այս գոլֆ Լէհմանը, երբէք մաքիցը չէր անցուցած ուրիշների համար մի որ և իցէ բան անել. Եւր մանկութեան օրից սկսած նա մտածել էր միայն իւր վերայ և ապրել էր միայն ինքն իրան երջանիկ անելու համար. Երբ նա փոքր էր և ուսումնարան էր գնում, աշխատում էր իւր ընկերներից ուստելիքներ և խաղալիքներ առնելու, բայց ինքը երբէք ոչինչ չէր տալիս, յիսոյ երբ նա փող վաստակել սկսաւ, նա աւելի ևս վատացաւ, նա խայողութիւն էր անում որքան որ կարողանում էր աշխատելով ամեն բան՝ որքան կարելի է՝ արժան գնով առնելու. Այսովհասով նա հարստացաւ, այնու ամենայնիւ թաղի մէջ նա յոյտնի էր աղքատ պ. Լէհման անունով:

Այս զարմանալի չէ. Ո՞վ կարող էր մտածել՝ նորան մի ուրիշ անուն տալ, երբ աեսնում էր նորան փողոցների մէջ գնացած ժամանակը՝ մաշնուած հացուստներով, դեղին, խիստ և վտիտ երեսով, նման այնպիսի մի մարդու, որ միշտ զրկանաց տակ է գտնուել.

Ո՞չ, մեծ սխալմանը է, սիրալ պատել հսականութեան վահանով, որը չի թողնում նորան բացուելու յօդուտ իւր մերձաւորին, և որը ընդհակառակն, նորան այնքան կարկամում և խստացնումէ, որ նա կորցնումէ մարդկային սրտի բոլոր առողջ և իրջանիկ զգացմունքները:

Այս պատճառով է որ Աստուածային բանը ասում. «Ո՞վ որ չափազանց կիսնայէ, կաղքատանայ միայն».

Թողարք Աէհմանը բնակում էր մի հին տան մէջ : մի փոքրիկ զիւղաքաղաքի ծայրում, իւր բնակարանը շրջապատուած էր բազմաթիւ խըրճիթներով, որոնք պատեհանում էին նորան, և որոնք վարձով էր տալիս աղքատ գործաւորներին : Չատ անգամ հազիւ մէկ մի կտոր բան կանցնէր այս վարձաբնակների ձեռքը ապրելու համար : բայց նորա լաւ էին ճանաչում՝ իւրեանց տանուաէրին և չէին ուշացնում նորան հատուցանելու իւրեանց պարտքերը որովհետեւ նորա լաւ զիտէին որ հակառակ դէկոքում անկիւմաբար իւրեանց տներիցը կարտաքսուէին :

Նորա ապրելու եզանակը բաւական մշշւառ մի մէկ ունէր, նա բնակում էր միայնակ, մի բանուոր կին գալիս էր ամեն օր նորա տունը կարդի գնելու, յիտոյ նա թաղնում գնում էր : Չատ յաճախ Աէհմանը ամբողջ օրեր էր անցնում տանց մարդկոյին մի ձայն լսելու : Իւր ժամանակը անցնում էր անտառի մէջ ձգած փայտեր որոնելով, ամենամեծ խնայողութեամբ իւր կերակուրը պատրաստելով : յիտոյ սկսում էր հաշուել իւր գանձերը, որոնց ժաղոված էր մասանների մէջ :

Դէկտեմբերի ցուրտ օրերից մէկում, Աէհմանը խնայով կողոքց իւր տունը և գնաց, Կրակը մարել էր, և նա այնպէս սաստիկ զողում էր՝ որպէս մէկ մաածած լինէր մէկ պէտք է շարժուել տաքնալու համար, այսպիսով և փայտին խնայողութիւն էր անում, և սակայն ուտելու հաց չունէր :

Նա ինքնիրան շատ աւելի ծեր էր զդում քան մէկ էր, եթէ պատշաճապէս հագնուած լինէր, և արանջում էր ցրտի զէմ՝ որը անց էր կացել մինչեւ նորա ոսկեները իւր գատ հազուսների միջից : Նա զժուարութեամբ կրծնում էր իւր գատ ազանի վերայ մումալով հիւսիսային քամու զէմ, որը սաստիութեամբ փշում էր նորա զլխարկը վար ձգելու :

Նա հասաւ հացագործի խանութը և մի հաց գնեց, և սղմելով նորան իւր թեի տակը, նա զժուարութեամբ իւր տան ճանապարհը բանց: Բայց ձիւնը սկսել էր զալ, և իւր տան կէս ճանապարհին չհասած, քամին ձիւնը այնպիսի կատաղութեամբ նորա երեսին էր խիսում նորան կուրացնելով, որ նա չորս կողմը նայեց մի վայրկենական ապաստանարան գտնելու համար :

Նա մի փոքրիկ խրճիթ տեսաւ մէծ յուսով նա մօտեցաւ և պատին կպաւ, որը զրան մօտ էր, և զուռը այլքան ծակեր ունէր, որ մարդ շատ լու կարող էր տեսնել ինչ որ ներսում պատահում էր: Երկու ժամը և տասներկու տարեկան աղջիկներ ճեմում էին խոհանոցի մէջ ծանր կերպով խօսակցելով, այնպէս որովէս մէկ բոլորովին երախայ չլինէրն: Իւրեանց փարրիկ զէմքերը զեղին և վտիւ էրն հազուսները սաստիկ մաշտած, և կրակարանի վերայ բոլորովին կրակ չկտր: Թուղովքը գիտէր որ ոյս մանուկները մի ամիս առաջ զրկուած էին իրենց հօրից, նա մեռել էր մաշուելով ու երկար ժամանակ հիւսնզութեան և մշշւառութեան հետ մրցելուց յիտոյ: Բայց այն ինչ որ նա չզիտէր, այս է որ Թովմաս Կա-

տիւն և իւր կինը, նոյն իսկ իրենց խեղճութեան մէջը, շատ աւելի հորուստ էին քան թէ ինքը իւր սակաւ դանձերով, որովհետեւ նորա զիտէին որ Քրիստոսը նոցա Փրկիչն էր, որը նոցա համար տեղ էր պատրաստած երկնային բնակարանների մէջ, և թէ ամենեին համեմատութիւն չկայ ներկայի տանջանքների և ապագայի փառքի մէջ որը Աստուծոյ որդոց բաժինը պիտի լինի :

Հանրիկո Կարտիկն ժամանակ չեր ունեցած ինքն իրան իւր մէջ ցաւին տալու, իւր ամուսնու հիւանդութեան և մահուան ժամանակից սկսած նա պէտք է աշխատէր բոլոր իւր ուժովը իւր զաւոկները պահպանելու համար, երբեմն ամրող օրը դաշտ գնալով, երրեմն երեկոյեան իւր տանը կար կարելով, Բայց միայն մի կնոջ աշխատանքը քիչ բան էր, մանաւանդ որ նա չեր կարողանում միշտ գործ գտնել, բայց նա իւր յայսը զրած էր Աստուծոյ վերայ, համեզու ած լինելով որ նա չպիտի թողնէ անօթոթիւնից մեռնելու ոչ իրան և ոչ իւր զաւակներին:

Թոգոլք ստի վերայ կանգնած զրան առաջ լոկ ամենափոքր աղջկան խօսք որ արտասուալի ձայնով տառւմ էր:

— Ո՛չ, նելի, քաղցած եմ:

— Այս, սիրելիս, հաւատում եմ որովհետեւ զու այսօր շատ քիչ բան ես կերած, բայց մայրս հաւանականարար կստանայ այս երեկոյ իւր օրավարձը և մեղ ուտելու մի բան կրէրէ:

— Ո՛չ, շատ երկար կտեէ մինչեւ նորա գտլը, Ենչ պիտի անենք մինչեւ այն ժամանակի, Քո հայի կտորդ այս առաւօտ աւելի փաքք էր քան թէ իմն, ես տեսայ որ մօրս աչքերը արտասուք էին կոխել այդ հայի կտորը քեզ տալու ժամանակի:

— Այս, ես շատ քաղցած եմ, Ճշմարիտը ասելով ես լաւ չեմ հասկանում ինչ որ մայրս այս առաւօտ մեղ կարդաց, « Քո հացդ քեզ պիտի տրուի և ջուր քեզ չպիտի պակաօի », Մհնք շատ չուր ունենք, բայց այս մեծ բան չեւ, երբ մէկը մէկ բան չունի ու տելու:

Կարելի է Աստուծած չզիտէ որ մենք այսչափ քաղցած ենք:

— Ո՛չ, այս, բայց կարելի է որ նա մեղ լսէ, եթէ նոյն իսկ մենք խնդրենք նորանից ուտելու մի բան, Աստահ եղիր որ նա մեղ տեսնու մէ և մեր վերայ հսկում, երբ մեր մայրը ստիպուած է մեղ թաղնելու, Գիտե՞ս զոււ որ մի քանի օր առաջ այն մեծ ծառը մեր տան կողքը ընկաւ, Լաւ, եթէ նա մեր տան վերայ ընկած լինէր կկործանէր նորան և մեղ ես հետը, Բայց Աստուծած իւր ձեռքը երկնցուց և ծառը միւս կողմը ձգեց, ոյնպէս որ նա մեղ ոչինչ վեաս չհասուց, եւ, եթէ նա այդ բանը արաւ, նոյնպէս շատ լաւ կարող է մեղ հաց տալ, Կուզեն միասին « հայր մեր » ասենք, նորա մէջը կոյ, « Զհաց մեր հանապազորդ տաւը մեղ այսօր », և զուցէ Աստուծած մեղ լուէ:

Թուղոլք, բոլորսին յուղուած, մինչեւ վերջը լոկ այս աղօթքը, որը այդքան յաճախ լուել էր, և որոնք նորա աչքին այն իմաստը չեն ունե-

ցած ինչպէս այս երեկոյ. Երկու փոքրիկներ ծնկան վերայ եկած ծանր կերպով կրկնում էին միասին մի և նոյն խօսքերը՝ նա նոցա լսեց մինչև որ նոքա ասացին զգացմամբ. «Զհաց մեր համապաղորդ տուր մեզ» . այն ժամանակ համարեա առանց երկմաներու, նորա համար բոլորովին նոր մի զգացման տակ, Ռուգոլֆը հանդարտութեամբ բացաւ դուռը և ձգեց իւր հացը երկու աղջիկների առաջը, որոնք դեռ ծնկան վերայ էին:

ԺԷՆԻՆ: ամենափոքրը, հացը վեր առաւ ուրախութեամբ կանչելով.

—Աշաւասի՞կ, ա՞չ, ինչու համար մենք աւելի շուտ չինդիրեցինք նորա նից:

Մենք յոյս ունինք որ Ռուգոլֆը սորանով չըսաւ տեանացաւ, և թէ բարիք անելու ուրախութիւնը զգալուց յետոյ, նա դորձ զրաւ բոլոր իւր հարստութիւնները նոցա միսիթարութեան համար, որոնք նորան շրջապատում էին:

Տ. ՊԵՐԱԲԵԼՈՎ.

ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՅԿԱԿՈՆ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ (ՎԵՄԱՏԻՊ) ԵԽ ԶԱՅՆԱԳՐՈՒՆ
ՄԱՆԿՈԿՈՆ ԵՐԳԱՐԱՆ ԱՆՈՒԱՆԵԱԼ ԳՐԵԱՆՑ ՎԵՐԱՅ ԴԱՏԱԲԵՆՈՒԹԻՒՆ.

Ա.

Այն օրից երբ ձայնագրութեան արուեստը փոքր ի շատէ տարածուեցաւ Թուսա - Հայոց մէջ, իմ պաշտօնակից Եղնիկ քահանայն առաջին տնգամ իւր աշխատասիրած «Դասագիրք Հայկական Ձայնագրութեան» վերնագրով գրքոյների Ա. տեսրակը և Բ. հատորի առաջին տեսրակը լոյս ընծայեց վիմագրութեամբ. Թող ներողամիտ լինի յիշեալ քահանայն իմ մի քանի նկատողութիւններիս համար իւր աշխատասիրած գրքոյների թերութեանց մասին, իմ նկատողութիւններս լինելու հո առաւելապէս Ա. հատորի (տեսրակ) և վերջին անգամ լոյս տեսած ձայնագրեալ «Մանկական երգարանի վերայ» Խոկ Բ. հատորի առաջին տեսրակը, որ մի ինքնուրոյն աշխատութիւն չէ, (բացի նորա հոգալու յասաջաբանից) և որ նորա միջի բոլոր շարականներն արտատպուած են նոյն իսկ Ա. էջմիածնում 1875 թ. տպագրուած ձայնագրեալ շարականից, իսկ եղանակների կազմութիւնն ու նոցա կանոնների բացատրութիւնը նոյնութեամբ առնուած են նոյնպէս Ա. էջմիածնում տպագրուած ՄԷծ. Պ. Նիկողայոս Ա. թաշճեանի դասագրիքից. Սորա մասին երկու խօսք ասելը իմ կողմից աւելորդ եմ համարում: Խոկ առաջին տեսրը, որին յիշեալ հեղինակը հայուր է անուանում, — ընդ ամենն երկու և կէս կամ երեք թերթ է, և պարունակում է իւր մէջ 25 փորձնական դասեր և մի քանի բանի առաջիկան, ու առաջիկն, երգեր, Ամիմագրութիւնը խիստ ազեղ է, զին էլ չափազանց թանկ - 50 կոսկէկ.